Խդրանց

Բնակչություն՝ 67

Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 17 կմ,
Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1030 մ,
Կարգավիճակը՝ սահմանամերձ,

Տարբեր աղբյուրներում հիշատակվում է Խդրանց, Խոտորանց, Խտրանց, Սիրքաթաս և այլ ձևերով: Տեղացիների վկայությամբ գյուղը նախկինում անվանվել է Ծաղկաձոր: Համապատասխանում է Սյունիքի Բարգուշատ գավառի Խոտորանց գյուղին, որի բարբառային հնչյունափոխությունից էլ առաջացել է Խդրանց անվանումը: Օտարները անվանել են նաև Սիրքաթաս:
Գյուղում կա եկեղեցի (1892թ.), մոտ 2 կմ արևելք՝ Չորեքդռնի ավերակ վանքը, 1 կմ հյուսիս-արևելք՝ գերեզմանատներ, խաչքարեր: Խդրանցը միավորված էր Ագարակի կոլտնտեսության հետ, որպես ինքնուրույն վարչական միավոր կազմավորվել է 1991թ. մայիսին:
Գյուղում է ծնվել գրականագետ, դոկտոր-պրոֆեսոր Ա.Հ. Բաբայանը:

Տնտեսությունը

Գյուղատնտեսական գործունեության հիմնական ուղղություններն են՝
- անասնապահությունը,
- դաշտավարությունը:

Հողային և այլ բնական ռեսուրսներ

Հողեր (ընդամենը)՝ 697 հա, այդ թվում՝
- Գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 298 հա, որից՝
- վարելահող՝ 54 հա, բազմամյա տնկարկ՝ 1 հա, խոտհարք՝ 5 հա, արոտ՝ 121 հա, այլ հողատեսք՝118 հա
- բնակավայրերի հողեր՝ 26 հա,
- անտառային հողեր՝ 372 հա, որից անտառածածկ՝ 254 հա